51	Թրթուրավոր տրակտորի մեխանիզատոր- վարորդ	1	150000	0,5	75000
52	Պահակ	4	115000	1	460000
53	Փոխարինող վարորդ	1	180 000	1	180000
	Ընդամենը	26	3580000		4350000
ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏ					
54	Էլեկտրիկ	1	230000	1	230000
55	Էլեկտրիկի օգնական	1	190000	1	190000
	Ընդամենը	2	420000		420000
	ԸՆԴԱՄԵՆԸ	124	10 475 000	0	18 920 000

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 152-Ա

<<16>> դեկտեմբերի 2025 թվական

քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 16 ՇԵՆՔ, ԹԻՎ 23 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԱՀԻՏ
ԿԱՌԼԵՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԵՐԵՔ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադեվոսյան փողոց, 16 շենք, թիվ 23 բնակարանը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում տվյալ բնակարանի բնակիչների կողմից չի սեփականաշնորհվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ հաստատված N 7 հավելվածով պետական բնակելի ֆոնդը և պետական ոչ բնակելի տարածքները սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին, հաշվի առնելով քաղաքացի Անահիտ Կառլենի Եղիազարյանի 2025 թվականի թվականի հունվարի 1-ի դիմումը նշված բնակարանը երեք անձից բաղկացած իր ընտանիքին նվիրելու վերաբերյալ.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադեվոսյան փողոց, 16 շենք, թիվ 23 հասցեի 91,41 քառակուսի մետր մակերեսով բնակարանը /Կադաստրային ծածկագիր՝ 08-003-0041-0009-003-026, Վկայական N 23102025-08-0049/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով նվիրել տվյալ բնակարանում փաստացի բնակվող և հաշվառված քաղաքացի Անահիտ Կառլենի Եղիազարյանի երեք անձից բաղկացած ընտանիքին:

2. Սույն որոշման 1-ին կետով նվիրաբերված բնակարանի նկատմամբ համասեփականատեր ճանաչել քաղաքացի Անահիտ Կառլենի Եղիազարյանի /Անձնագիր՝ AX0604240, տրված՝ 23.01.2025թ. 028-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի

համայնք, քաղաք Մարալիկ Արկադի Տեր-Թադեվոսյան փողոց /նախկինում Ձերժինսկի փողոց/ 16 շենք, 23 բնակարան/, Ամուսնուն՝ Ալբերտ Աբելի Մեհրաբյանի /Նույնականացման քարտ՝ 018763649, տրված՝ 05.08.2025թ. 028-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ Արկադի Տեր-Թադեվոսյան փողոց /նախկինում Ձերժինսկի փողոց/ 16 շենք, 23 բնակարան/, աղջկա՝ Նունե Ալբերտի Մեհրաբյանի /Անձնագիր՝ AL0204258, տրված՝ 07.04.2023թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ Արկադի Տեր-Թադեվոսյան փողոց /նախկինում Ձերժինսկի փողոց/ 16 շենք, 23 բնակարան/, /հետագայում Նվիրառու/:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր.

բ) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման՝ Նվիրառուի միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման մասին Նվիրառուին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ՝ 11

դեմ՝ 0

ձեռնպահ՝ 0

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ

Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

Ա. ՇԱԲՈՅԱՆ

Հ. ԶԱՏԻԿՅԱՆ

Ժ. ԱԼԵՔՅԱՆ

Ն. ՍԱՐՈՅԱՆ

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<16>> դեկտեմբերի 2025 թ.

քաղաք Մարալիկ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 153-Ա

<<16>> դեկտեմբերի 2025 թվական քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 16 ՇԵՆՔ , ԹԻՎ 27 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԱՆՆԱ
ՎԼԱԴԻՄԻՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԵՐԵՔ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադեվոսյան փողոց, 16 շենք, թիվ 27 բնակարանը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում տվյալ բնակարանի բնակիչների կողմից չի սեփականաշնորհվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ հաստատված N 7 հավելվածով պետական բնակելի ֆոնդը և պետական ոչ բնակելի տարածքները սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին, հաշվի առնելով քաղաքացի Աննա Վլադիմիրի Մուրադյանի 2025 թվականի սեպտեմբերի 11-ի դիմումը նշված բնակարանը իր երեք անձից բաղկացած ընտանիքին նվիրելու վերաբերյալ.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադեվոսյան փողոց, 16 շենք, թիվ 27 հասցեի 76,09 քառակուսի մետր մակերեսով բնակարանը /Կադաստրային ծածկագիր՝ 08-003-0041-0009-003-027, Վկայական N 22102025-08-0041/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով նվիրել տվյալ բնակարանում փաստացի բնակվող և հաշվառված քաղաքացի

Աննա Վլադիմիրի Մուրադյանի երեք անձից բաղկացած ընտանիքին:

2. Սույն որոշման 1-ին կետով նվիրաբերված բնակարանի նկատմամբ համասեփականատեր ճանաչել քաղաքացի Աննա Վլադիմիրի Մուրադյանին /Անձնագիր՝ AL02003340, տրված՝ 06.04.2023թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ Արկադի Տեր-Թադևոսյան փողոց /նախկինում Ձերժինսկի փողոց/ 16 շենք, 27 բնակարան/, աղջկան՝ Ռուզաննա Վարդանի Մուրադյանին /Նույնականացման քարտ՝ 006812929, տրված՝ 21.04.2016թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ Արկադի Տեր-Թադևոսյան փողոց /նախկինում Ձերժինսկի փողոց/ 16 շենք, 27 բնակարան/, աղջկան՝ Լիլիթ Վարդանի Մուրադյանին /Անձնագիր՝ AU0230618, տրված՝ 12.04.2021թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ Արկադի Տեր-Թադևոսյան փողոց /նախկինում Ձերժինսկի փողոց/ 16 շենք, 27 բնակարան/, /հետագայում Նվիրառու/:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր.

բ) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման՝ Նվիրառուի միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման մասին Նվիրառուին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ՝ 11

դեմ՝ 0

ձեռնպահ՝ 0

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ

Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

Ա. ՇԱԲՈՅԱՆ

Հ. ԶԱՏԻԿՅԱՆ

Ժ. ԱԼԵԲՅԱՆ

Ն. ՍԱՐՈՅԱՆ

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ

<<16>> դեկտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 154-Ա

<<16>> դեկտեմբերի 2025 թվական

քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄՁԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-
ԻՆ ՓՈՂՈՑ, 28 ՇԵՆՔ, ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏՈՒՇ ԳԵՎՈՐԳԻ ԱՎԴԱԼՅԱՆԻ ԵՐԿՈՒ
ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, 28 շենքի, թիվ 3 հասցեի բնակարանը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում տվյալ բնակարանի բնակչի կողմից չի սեփականաշնորհվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ հաստատված N 7 հավելվածով պետական բնակելի ֆոնդը և պետական ոչ բնակելի տարածքները սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին, հիմք ընդունելով Անիպեմզա բնակավայրի վարչական ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 31-ի N 3518 տեղեկանքը, համաձայն որի քաղաքացի Արտուշ Գևորգի Ավդալյանի եկու անձից բաղկացած ընտանիքը 1953 թվականից փաստացի բնակվում է Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, 28 շենք, թիվ 3 հասցեի բնակարանում և հաշվառված են տվյալ հասցեում, հաշվի առնելով քաղաքացի Արտուշ Գևորգի Ավդալյանի 2025 թվականի հոկտեմբերի 31-ի դիմումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոց, 28 շենքի, թիվ 3 հասցեի 86,45 քառակուսի մետր մակերեսով բնակարանը /կադաստրային ծածկագիր՝ 08-013-0007-0020-007-003, Վկայական՝ N 1336270, տրված՝ 28.02.2005թ/ սեփականության իրավունքով նվիրել տվյալ բնակարանում փաստացի բնակվող և հաշվառված քաղաքացի Արտուշ Գևորգի

Ավդալյանի երկու անձից բաղկացած ընտանիքին /հետագայում Նվիրառու/:

2. Սույն որոշման 1-ին կետով նվիրաբերված բնակարանի նկատմամբ համասեփականատեր ճանաչել Արտուշ Գևորգի Ավդալյանին /Անձնագիր՝ AT0379089, տրված՝ 08.02.2020թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Անիպեմզա բնակավայր 1-ին փողոց, 28 շենք, թիվ 3 բնակարան/, կնոջը՝ Անահիտ Նապոլեոնի Կարապետյանին /Անձնագիր՝ AX0536612, տրված՝ 04.11.2024թ. 016-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Անիպեմզա բնակավայր 1-ին փողոց, 28 շենք, թիվ 3 բնակարան/, /հետագայում Նվիրառու/:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր.

բ) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Նվիրառուի միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման մասին Նվիրառուին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ՝ 11

դեմ՝ 0

ձեռնպահ՝ 0

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ

Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

Ա. ՇԱԲՈՅԱՆ

Հ. ԶԱՏԻԿՅԱՆ

Ժ. ԱԼԵԲՅԱՆ

Ն. ՍԱՐՈՅԱՆ

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

<<16>> դեկտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 155-Ա

<<16>> դեկտեմբերի 2025 թվականի

քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ
ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՀԱՆ ՄՅԱՍՆԻԿԻ
ԻՍՊԻՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-003-0131-0129
ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,174 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ, 12-րդ, 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Վահան Մյասնիկի Իսաիրյանին սեփականություն իրավունքով պատկանող 08-003-0131-0129 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի 0,174 հեկտար մակերեսով հողամասում անասնաշենք կառուցելու վերաբերյալ ներկայացված 2025 թվականի նոյեմբերի 14-ի դիմումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Վահան Մյասնիկի Իսաիրյանին /Նոյնականացման քարտ՝ 2903750645, տրված՝ 26.12.2017 թվականին, 022-ի կողմից, հացե՝ մարզ Շիրակ Անի համայնք, քաղաք Մարալիկ Ռիզայի փողոց տուն 115, հետագայում Քաղաքացի/ սեփականություն իրավունքով պատկանող 08-003-0131-0129 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի 0,174 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակություն, այդ հողամասում Քաղաքացու կողմից գյուղատնտեսական արտադրական նշանակության անասնապահական շինություն կառուցելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա հողի կադաստրային արժեքների տարբերության վճարում չի պահանջվում:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

1) Հողամասի նպատակային նշանակության սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և համայքի 2026 թվականի հողային հաշվեկշռում:

4. Սույն որոշմամբ նախատեսված հողամասի նպատակային նշանակության փոփոխությամբ պայմանավորված անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ Քաղաքացու միջոցներով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

Կողմ՝ 11

դեմ՝ 0

ձեռնպահ՝ 0

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ

Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

Ա. ՇԱՐՈՅԱՆ

Հ. ԶԱՏԻԿՅԱՆ

Ժ. ԱԼԵԲՅԱՆ

Ն. ՍԱՐՈՅԱՆ

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<16>> դեկտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 156-Ա

<<16 >> դեկտեմբերի 2025 թվականի

քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0020-0219 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,0065
ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ
ՔԱՂԱՔԱՅԻ ՍԵՐՅՈԺԱ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-6-րդ ենթակետերը և հաշվի ունենալով, որ քաղաքացի Սերյոժա Վարուժանի Կարապետյանին /հետագայում՝ Քաղաքացի/ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հ. Շահինյան փողոց 204/12 և Հ. Շահինյան փողոց 204/10 հասցեներում գտնվող առևտրի ստահի կառուցման և սպասարկման համար նախատեսված 08-003-0020-0172 և 08-003-0020-0218 կադաստրային ծածկագրով համապատասխանաբար 0,0156 և 0,0065 հեկտար մակերեսներով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերին /Վկայականներ՝ N 12012021-08-0028, N 02072025-028-0026/ հարակից, համայնքի սեփականությունը հանդիսացող 08-003-0020-0219 կադաստրային ծածկագրով 0.0065 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /հասցե՝ մարզ Շիրակ, քաղաք Մարալիկ, Հ. Շահինյան փողոց, թիվ 204/14 հողամաս, Վկայական՝ N 24032025-08-0025/ հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկությունների միջոցով, հաշվի առնելով Քաղաքացու 2025 թվականի դեկտեմբերի 3-ի դիմումը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող 08-003-0020-0219 կադաստրային ծածկագրով 0.0065 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /հասցե՝ մարզ Շիրակ, քաղաք Մարալիկ, Հ. Շահինյան փողոց, թիվ 204/14 հողամաս, Վկայական՝ N 24032025-08-0025/, որպես ընդլայնում, ուղղակի կարգով տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 (մեկ) քառակուսի մետրը՝ 792 (յոթ հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, 0.0065 հեկտար հողամասի համար **51 480 /հիսունմեկ հազար երեք չորս հարյուր ութսուն/** Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Սերյոժա Վարուժանի Կարապետյանին /Անձնագիր՝ AU0353540, տրված՝ 13.07.2021թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Կոլտնտեսականների փողոց, 7-րդ նրբանցք, տուն 9/1/՝ Քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հ. Շահինյան փողոց 204/12 և Հ. Շահինյան փողոց 204/10 հասցեներում գտնվող առևտրի ստահի կառուցման և սպասարկման համար նախատեսված 08-003-0020-0172 և 08-003-0020-0218 կադաստրային ծածկագրով համապատասխանաբար 0,0156 և 0,0065 հեկտար մակերեսներով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի /Վկայականներ՝ N 12012021-08-0028, N 02072025-028-0026/ ընդլայնման համար:

2. Նշել, որ՝

1) օտարվող հողամասը չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

2) հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

3) օտարվող հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշմանից բխող իրավունքների պետական գրանցումը՝ Քաղաքացու միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԱՆԴԱՄՆԵՐ՝**

Կողմ՝ 11

դեմ՝ 0

ձեռնպահ՝ 0

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ

Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

Ա. ՇԱԲՈՅԱՆ

Հ. ԶԱՏԻԿՅԱՆ

Ժ. ԱԼԵՔՅԱՆ

Ն. ՍԱՐՈՅԱՆ

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<16>> դեկտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 157-Ն

<<16> դեկտեմբերի 2025 թվականի

քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 181-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ՝ 11

դեմ՝ 0

ձեռնպահ՝ 0

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ

Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

Ա. ՇԱՐՈՅԱՆ

Հ. ԶԱՏԻԿՅԱՆ

Ժ. ԱԼԵՔՅԱՆ

Ն. ՍԱՐՈՅԱՆ

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<16>> դեկտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 181-Ն որոշման N N 1-3 հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 01, դաս 01 (Ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4214 (Կապի ծառայություններ) հոդվածի «3750.0» թիվը փոխարինել «4250.0» թվով, 4251 (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի «5000,0» թիվը փոխարինել «990,0» թվով:
2. Գործառական դասակարգման բաժին 05 խումբ 01, դաս 01 (Անի կոմունալ տնտեսության պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4112 (Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ) հոդվածի «1000,0» թիվը փոխարինել «2299,0» թվով, 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի «430,0 » թիվը փոխարինել « 507,0» թվով, 4264 (Տրանսպորտային նյութեր) հոդվածի «13396,0 » թիվը փոխարինել «20518,0» թվով, 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածի «4500,0» թիվը փոխարինել «4581,0» թվով:
3. Գործառական դասակարգման բաժին 05 խումբ 03, դաս 01 (Սան.մաքրում) և տնտեսագիտական դասակարգման 4112 (Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ) հոդվածի «6000,0» թիվը փոխարինել «11586,7» թվով, 4221 (Ներքին գործուղումներ) հոդվածի «0» թիվը փոխարինել «15,0» թվով:
4. Գործառական դասակարգման բաժին 08. խումբ 02, դաս 07 (Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում) և տնտեսագիտական դասակարգման 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի «2772,0» թիվը փոխարինել «500.0» թվով:

5. Գործառական դասակարգման բաժին 09 խումբ 02, դաս 01 (Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 4637 (Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածի «3000,0» թիվը փոխարինել «837,0» թվով, 4657 (Այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածի «4855,0» թիվը փոխարինել «900,0» թվով:
6. Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 05, դաս 01 (Ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի «3500,0» թիվը փոխարինել «500,0» թվով, 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածի «3955,0» թիվը փոխարինել «2889,7» թվով:
7. Գործառական դասակարգման բաժին 06 խումբ 03, դաս 01 (Ջրամատակարարում) և տնտեսագիտական դասակարգման 4112 (Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ) հոդվածի «1000,0» թիվը փոխարինել «2759,6» թվով, 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի «4140,0» թիվը փոխարինել «4165,0» թվով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 158-Ա

<<16>> դեկտեմբերի 2025 թվականի

քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԱՐԱԼԻԿԻ
ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 105-Ա ՈՐՈՇՄԱՄԸ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ
մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի
1-ին հոդվածի 2-րդ մասի, 35-րդ հոդվածի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ
հոդվածի 1-ին մասի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի
<<Մարալիկի արվեստի դպրոց>> բյուջետային հիմնարկի կանոնադրությունը համաձայն
հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ
համայնքի ղեկավարի 2007 թվականի նոյեմբերի 22-ի <<Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Անի համայնքի <<Մարալիկի արվեստի դպրոց>> բյուջետային հիմնարկ
կանոնադրությունը հաստատելու մասին>> N 105-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԱՆԴԱՄՆԵՐ**

Կողմ՝ 11

դեմ՝ 0

ձեռնպահ՝ 0

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ

Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

Ա. ՇԱԲՈՅԱՆ

Հ. ԶԱՏԻԿՅԱՆ

Ժ. ԱԼԵՔՅԱՆ

Ն. ՍԱՐՈՅԱՆ

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ



<<16>> դեկտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 159-Ա

<<16> դեկտեմբերի 2025 թվականի

քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՍՆՆԴԻ ՕՐԱՊԱՀԻԿԻ ԳՆԱՋԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2025 թվականի մայիսի 5-ի N 41-Ն հրամանով հաստատված <<Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» հանրային առողջապահական նորմատիվը>> և հաշվի առնելով Անի համայնքի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների մասնակցությամբ անցկացված քննարկման արդյունքների վերաբերյալ կազմված 2025 թվականի նոյեմբերի 26-ի արձանագրությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի օրապահիկի գնաչափ սահմանել 400 /չորս հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 5-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ՝ 11

դեմ՝ 0

ձեռնպահ՝ 0

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ

Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

УЧУР



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 160-Ա

<<16>> դեկտեմբերի 2025 թվականի

քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 4-րդ և 12-րդ կետերի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք Ձորակապ բնակավայրի 08-073-0565-0001 կադաստրային ծածկագրով ներբնակավայրային փողոցը անվանակոչել՝ <<մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Ձորակապ, 1-ին փողոց, 1-ին փակուղի>> /Ծածկագիր՝ 08132DDJ3Q9E/:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք Ձորակապ բնակավայրի 08-073-0004-0021 կադաստրային ծածկագրով ներբնակավայրային փողոցները անվանակոչել՝ <<մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Ձորակապ, 16-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 1-ին փակուղի>> /Ծածկագիր՝ 08132CSFKL9Z/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆՊԱՄՆԵՐ

Կողմ՝ 11

դեմ՝ 0

ձեռնպահ՝ 0

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ

Է. ՌՈՒՌՈՒՏՅԱՆ

Ա. ՇԱԲՈՅԱՆ

Հ. ԶԱՏԻԿՅԱՆ

Ժ. ԱԼԵՔՅԱՆ

Ն. ՍԱՐՈՅԱՆ

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<16>> դեկտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ

Հայաստանի Հանրապետության Երևանի մարզի Անի համայնքի քաղաքական կազմակերպություն

1. Հայաստանի Հանրապետության Երևանի մարզի Անի համայնքի քաղաքական կազմակերպության 03-073-0556-0001 հեռախոսային համարով տեղեկատվության փոխանցումներ կատարվում են՝ «մարզ Երևան, Անի համայնք, քաղաք Մարալիկ, 1-ին փողոց, 1-ին փակուղի» /Փակուղի՝ 051320013442/:

2. Հայաստանի Հանրապետության Երևանի մարզի Անի համայնքի քաղաքական կազմակերպության 05-073-0004-0021 հեռախոսային համարով տեղեկատվության փոխանցումներ կատարվում են՝ «մարզ Երևան, Անի համայնք, քաղաք Մարալիկ, 16-րդ փողոց, 2-րդ հարկեցք, 1-ին փակուղի» /Փակուղի՝ 0513205712 977/:

2-րդ փողոցում ունի մեկ փոփոխվող հրապարակման հաշվարկի քվանտ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ
ԱՄՆԱՄԵՆ

Կողմ՝ 11

դեմ՝ 0

ձայնակա՝ 0

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Է. ՍԱԼԻՔՅԱՆ